թէ 5–րդ, այլ յետագայ դարերի գործ է, կազմուած ամենաշուտը Ի· դարու վերջերում, իսկ աւելի հաւանօրէն՝ Օմայիտների հարստութեան վերջում ու առաջին Աբասիտների օրով (Ը· դարի կէսերին)։

Մարքվարտ անվերապահօրէն այն կարծիքն է յայտնում, որ Մովսէս Խորենացու —«Կեղծ Մովսէս Խորենացու» — անունով ծանօթ Աշխարհագրութեան պահուած երկու՝ համառօտ եւ ընդարձակ՝ խմբագրութիւնից իսկականը վերջինս է, իսկ համառօտը՝ մի պարզ քաղուածք նրանից։

Նոյնն է նաեւ, ասում է Մարքվարտ, Կորիւնի պարագան, որի անունով էլ, ինչպէս յայտնի է, «Վարք Սրբոյն Մաշթոցի» աշխատութեան երկու խմբագրութիւններ պահուած են — համառօտ եւ ընդարձակ։ Իսկականը վերջինս է, մինչ առաջինը՝ պարզ քաղուածք։

Ապա, Մարքվարտ այն տեսակէտին է, որ Մովսէս Խորենացու անունով պահուած Աշխարհագրութեան հեղինակը նո՛յն անձն է, ինչ որ՝ Պատմութեան, որ՝ այդ երկու աշխատութիւնները սերտ կապ ունին իրար հետ։

Գալով Աշխարհագրութեան աղբիւրներին՝ նրանց համար հեղինակը չէ օգտուել, ասում է Մարքվարտ, պաշտօնական ցանկերից, այլ գլխաւորապէս նկատի է ունեցել Նեստորական եկեղեցու եպիսկոպոսական թեմերի ցանկը, բայց մանաւանդ պատմագրական աղբիւրներ — Եղիշէ, Ղազար Փարպեցի, շատ հաւանօրէն նաեւ Սեբէոս։

Հեղինակին ծանօթ են նաեւ Բարծրանի պատմութիւնը, ինչպէս եւ իրանական դիցաղնական պատմութիւններ։

«Առանձնապէս հետաքրքրական է Խորասան նահանգի բաժանումներին վերաբերեալ ցանկը, որ զարմանալիօրէն նմանութիւններ ունի չինացի ուխտաւոր Հիւան–Զուանդի (629–644) թողած տեղեկութեանց, ինչպէս նաեւ Աբդալլահ բէն Թահիրի (211–212 ըստ Հ·) հարկային ցանկի հետ»։

Մարքվարտի կարծիքով՝ «Աշխարհագրութեան» հեղինակը օգտուում է նկարագրելու համար Սկիւթացոց եւ Սարմատացոց երկիրները, մի գրաւոր աղբիւրից եւս, որ ոչ միայն ծանօթ է եղել Սլաւների արշաւանքին դէպի Բալկանեան թերակղզին — մինչեւ Մակեդոնիա, Դալմաթիա եւ Աքէա — այլ եւ Յուստինիանոս Բ· եւ Մաւրիկիոս կայսրների օրով կատարուած անցուդարձերին, Հեփթաղեաններին, Ավարացիներին, Դանուբեան Բուլգարների գաղթականութեան։

Այսպիսով, Մարքվարտի յոյժ մանրակրկիտ ուսումնասիրութիւնը մի թանկագին նպաստ է ինչպէս Իրանի աշխարհագրութեան եւ պատմութեան, այնպէս նաեւ մեր մատենագրութեան քննութեան։

* * *

Մաւալով մեծ չէ՛ «Հայերէն այբուբենի ծագման մասին» քննական ուսումնասիրութիւնը, ընդամէնը 60 էջ, բայց՝ վերին աստիճանի շահեկան։

Յառաջաբանում հեղինակը ասում է, որ այդ աշխատութիւնը առաջին մասն է կազմում հայոց պատմութեան վերաբերեալ իր ուսումնասիրութեանց շարքի, եւ որի հիմքում դրուած է հեղինակի մի բանախօսութիւն՝ կարդացուած տակաւին 1902–ին, «Արեւելագէտների Միջազգային Խորհրդաժողովի» նիստին, Համբուրգում։

Նոյն այդ ուսումնասիրութիւնը 1905–ին մրցանակի է արժանացած Մոսկուայի Լազարեան ճեմարանի կողմից։

Աշխատութեան հենց սկզբում Մարքվարտ մատնանշում է պատմական այն շատ հետաքրքրական երեւոյթը, որ յոյն քրիստոնէական ազդեցութեան ենթակայ ու տակաւին չհելլէնացած եւ չհռոմէացած ժողովուրդները — ասորիներ, դպտիներ, գոթեր, հայեր եւ արեւելեան սլաւներ — հին դարու վախճանին ստեղծեցին իրենց սեփական՝ն, ազգային գիրը, մինչ բոլոր այն ժողովուրդները, որոնք Հռոմի բացառիկ ազդեցութեան տակ էին — իրլանտացիք եւ իսլանտացիք որոշ չափով բացառութիւն էին կազմում — զուրկ մնացին այդ բարիքից։

Աւելին դեռ· Հռոմը ջանադիր էր ամէն կերպ՝ իրեն ենթակայ բոլոր ժողովուրդների մէջ այն համոզումը արմատացնել, թէ նրանց լեզուն եւ բանահիւսութիւնը անարժէք են, որով եւ արհամարհանք էր սնուցանում ու ժխտական վերաբերմունք զարգացնում այդ ժողովուրդների մէջ՝ հանդէպ իրենց ազգային էութեան, սեփական աւանդութիւնների։